

№ 231

С 1926 № 469

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(С Т И Х И)




1. Մ. Թահմազյան

2. Ա. Մխչյան

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹ. Կ. Ա.-Ի ՊՐՈԼԵՏԻՐՈՂՆԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՍԵՎՑԻԱԻ

(Издание Армсекции К. А. П. -а)



Կրասնոդար, 1926 թ.

№ 237
Ca 1357

Մ. ԹԱՄԱՅՅԱՆ

(Մ. ТАМАЗЬЯН)

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Տ Ի Խ Ի)

Բյուր փորձանքներ յեկան-անցան
զանկլ ճակիս փառելով,
հուր ուրեր իմր դարձան
անփարձ կամքս կռելով...



БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹ. Կ. Ա.-Ի ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՍԵՎՅԱԼԻ

(Издание Армсекции К. А. П. П.-а)



Կրանտոյար 1926 թ.

Тираж 1500 экз.

Краснодар. Тип. „Культура“, Красноарм. 85. Заказ № 309.



59170.66

*
* *

Մեր ժամանակը այնպիսին է, յերբ պետք է փնտռել ու գտնել գրելու այն նոր ձևվը, վորը ոերտ համապատասխանում է պրոլետարական գրականության վոգուն, կարողանում է ամփոփել ու արտահայտել այն—ամենից լավ:

Յեզ արդ նորը մենք փնտռում ենք ու գտնում ուղեցույց ունենալով պրոլետգրականության սկզբունքները թե. — «առողջ պրոլետարական հոգեբանությունն ու վորակը առաջին տեղն են բռնում»: Այնուամենայնիվ չենք մոռանում և այն թե. — «հինը պետք է ոգտագործել նորը ստեղծելու համար» և այլն:

Իսկապես, յեթե բնենել ուշադրությամբ
ամբողջ այս գրքույկը—կարելի ե գտնել ա-
մեն ուղղությամբ ու ձևի գրվածներ, շատերը
նոյնիսկ պիտի ասեն թե այստեղ շեղումներ
կան պրոլետարիատից հեռու, թե սերը
և բնությունը այստեղ յերգվում ե այնպես ինչ-
պես անցյալում, թե այստեղ նոր բան չըկա
և այլ նկատողություններ: Այդ մենք նախագ-

գում եյինք, բայց վորովհետեւ մեր նպատակն է
շեշտել վոր սերը և բնութիւնը չի կարող չը յեր-
գել պրօլետարիոյ հեղափոխական կամ հասա-
րակական մօտիվներէից հետո, վոր հա չի կա-
րող մերժել լիբիքան վորովպօետը արտահայ-
տում է իր գգացումները, ինչպես վոր նրանք
կան,—մենք համարձակվում ենք տալ այդ-
պիսիները:

Մեր գործն է տալ ինչ վոր կա, իսկ
քննադատի գործն է ցոյց տալ մեր շեղում-
ները...

Խմբագրող՝ Մ. ԹԱՀՄԱԶԵԱՆ

Յ Ե Ս

Այս անհրապօւյր կյանքում դաժան
անհուն տանջանք կրեցի
սակայն դարձյալ քաջի նման
յես պայքարը սիրեցի...
Սոչի—1920 թ.

Ահաբեր, մահաբեր յերազներ
փարեցին, հարեցին իմ սրտին.—
«Քո հույզեր ու յերգեր կենսարեւ
հեգնեցին, ծողրեցին մօլեգին»:

Մռայլփեց, ծիծաղեց ու ցավեց,
իմ հոգին մարդերին այն չնչին,
վոր այնպես աներես կարճատես
տնրում են, կաշկանդեն իմ ճամբին..
Սոչի—1922 թ.

1914—1918

Տ. Թումանյանին

Անթիվ գրերի հսկա մեհլանում
վողջակեցները ինչքան շատ եյին,
նրանց շարքերը չեյին վերջանում,
ու չեն վերջանա, վոչ, ամենիվին—
մինչև վոր փողն է տիրում աշխարհին:

Արյունը հոսեց գետերի նման
բլուր վոսկորներով սարեր գոլացան
ինչքան աշխատանք կորավ և սակայն
հրեշ խենթերը դեռ չը հագեցան—
ու չեն հագենա մինչև գերեզման..
Սոչի—1920 թ.

Ինչքան հարազատ ես դու. ինձ համար
գեղեցիկ կովկաս, հարազատ իմ վայր
ինձ հաճելի յե յերգել քեզ համար,
յերգել քո գովքը, յերգել անդադար:

Յերբ յես կը տեսնեմ, քո բարձր սարեր
կուրծքս կը ցնցեն գեղեցիկ հույզեր.
կուգեմ թե առնել, թաչել դեպի վեր
հոն, ձեր գազաթը պարզված դեպ յեթեր:

Յե՛վ կուգեմ յես ձեզ գրկել ջերմագին
փարել ու մարիլ ձեր անբիծ կրծքին
ու այդպես փարած լուռ խնդալ ու լալ
վոր ինձ ող տվիք և ջուր և կյանք ալ. .

Սոչի—1921 թ.

ՀԵՂՈՓՈՒԹՅԱՆ ՆԱՀԱՏԱԿՆԵՐԻՆ

26-ի Հիշատակին

Մռայլ հանքերում,
գործարաններում
ու հոծ գաշտերում
հացառատ յերկրի,
վոր տիրողներին
դիզում եյին գանձ,
ձեզ—տանջանք ու լաց—
աշխատում եյիք
իզուր կյանք մաշում
անտեղ ու անտուն:

Ու ձեր բրտիները
լուծված արյան հետ
թափվում եր առատ

հոգնատանջ ճակտից
ինչպես ջրերը
անձրեվից հետո
պղտոր ու աղտոտ,
վոր լվանում են
ժայռոտ լեռների
կուրծքը հողմածեծ:

Դեռ ո՞վ չը լսեց
վոր շարաթներով
ու տարիներով
լույս կյանքից հեռու
փոշում, խափարում,
անտնց կեղտի մեջ
խեղդիչ հյուղերի,

թույնառատ, ողում
ապրում եյիք դուր—
սերունդ բազմացնում:

Սերունդ պատրաստում
մի պողպատ սերունդ,
վոր հոկտեմբերյան
վճռող մարտին
հաղթեց անմահ,
խորտակեց հինը
ու յերգում կերավ
պայքարում ընկած
հերոս հայրերի
ու յեղբայրների
շիրիմի վրա
նրանց դրոշը
կրծքով պաշտպանել
ու առաջ տանել...

Դուր քաշում եյիք
սեվ անարգանքը
ու բեռը կյանքի
լի գրկանքներով
և ձեր մեջքերը
ճարճատու հիլին
այդ քար բեռի տակ
ծանր, անվողոր:—

Սեվ տարիներն
եյին յերկարում
մռայլ անժպիտ
ինչպես գիշերը
անկյանը հյուսիսի
սառն ու անվերջ:
Այդ անխիղճ ճնշող

անլույս որերում,
յերբ դահիճների
գարշ լրբութունը
չափից անցնում եր
դուք պարզում եյիք
կարմիր որերի
դրոշը բոսոր:

Յե՛վ վայ թե մի ույժ
յելներ դեմ առ դեմ
այդ ըմբոստ ժամին
դուք կյանքի գնով
կը փշրտեիք
ամեն մի արգելք
ձեր ճանապարհին
ու քաջ կնկնեյիք
բաղրիկադներում
ձեր վառ իգլալին
միշտ հաստատ, անշեղ...

Ո՛, ո՞վ ե վառել
մեր լույս որերի
արեվը կարմիր
յեթե վոչ դուք, դուք
ձեր անմահ մահով...
ձեր գործերը վեհ
չեն մոռացվելու
ո՛, լերբեօ, յիրբեք...

Ննջեցեք հանգիստ
գրկում մայր հողի
անխախտ հավատով
վոր ձեր դրոշը
ուղիով անշեղ
տանում են առաջ

ձեր զավակները
ու թոռները քաջ
դեպ առաջ, առաջ
ծանր պայքարում
կարմիր որերի:

Ննջեցեք հանգիստ.—
ձեր իզույնների
մեծ արշալույսը
ահա փռելի է
փողջ յերկրագունդը

և դահիճները
մահվան դող բռնած
սարսափում են լուռ
մոտիկ ճայթյունից
գալիք որերի...

Ննջեցեք հանգիստ,
թող հանգստանան
պայքարում հոգնած
ձեր վոսկորները,—
ննջեցեք հանգիստ...
Կրասնոդար—1926 թ.

Վ Ե Ր Հ Ա Լ Ո Ւ Յ Ս

Յերեկոյան դեմ
արփին վոսկիդեմ,
մոտեցավ կամաց
ծովին քնացած,—
ու նայեց նրան

ժպտաց աննման,
սահեցավ դեպ ցած
ու գիրկը գնաց,
գիրկը մայր ծովի,
խնդամայր ծովի:
Սոչի—1920 թ.

Ը Մ Բ Ո Ս Տ

Լոեց ձայնը տառապանքի
խարված—ջահիլ կրծքիս տակ
լոեց կանչը լաց-արցունքի
զուր տառապած կրծքիս տակ:

Հոն, բողբոջ մնաց միայն
և վրեժը կատաղի,
այնտեղ թուլնի մնաց միայն,
կրած անհուն տանջանքի...

Սոչի—1920 թ.

Լ Ո Ւ Ս Ն Յ Ա Կ Ի Ն

Հեյ, ինչքան պայծառ փայլում ես աշդտեղ
յրկնակամարի անհաս բարձունքում,
սիրտս դուրսում են ցուրբերդ շքեղ,
և հոգիս անհագ դեպ քեզ ե ձգտում:

Թռչել եմ ուզում մի ակնթարթում
այնտեղ, բո պայծառ ծոցը լուսարծարծ
և կրծքիդ փարել, խնդալ եմ ուզում,
ինչպես մանուկը մոր գրկում սիրած...

Սոչի—1921 թ.

ՆԱՀԱՏԱԿ ՀԵՐՈՍԻՆ

ՄԱՆՎԵԼ ԵՂԲՈՐՍ ՀԻ-
ՇԱՏԱԿԻՆ, ՎՈՐ ԲՆԿԱՎ
ԹՇՆԱՄՈՒ ԳՆԴԱԿԻՑ...

Դու վերջին ճիչդ այստեղ կանչեցիր, ծառերի տակին,
կուրծքդ վռոզված լայն վերքից հոսող կարմիր արյունով,
ննջեցիր հանգիստ, հավիտյան քնով անդարձ խորտակված,
կարմիր որերի մեծ հաղթանակի անզուսպ ծարավով:

Դու զոհ գնացիր այն տազնապալի դառն որերին,
անվողոր պարտքի եվ հրավումքի զորությամբ մղված,
դու կյանքդ տվիր, բայց գիտակցաբար հաղթանակեցիր—
կեցցե՛ս, ո, յեղբայր, դու չե՛ս մոռացվի,—չե՛, դու չե՛ս մեռած...

Սոչի—1921 թ.

1917

Կարմիր հսկան հաղթեց ահա
պարզվեց խավարը կյանքի,
փթած հիմքը խախտվեց ահա
հին, բռնության աշխարհի:

Սոչի—1918 թ.

Խոր ձորերի անդունդներում
 Խնչ ե գետակն աղմկում,
 Հուսակտուր լալիս, հեծում,
 անվերջ տնքում, շառաչում:

Խնչ ե անհաշտ ափին հարվում,
 հսկա, խոժոռ ժայռերին,
 և կատաղած փրփուր թքում
 դեպի յերկինք, արեվին...

Ոձի նման Խնչ ե վշշում,
 կամ խուսափում սրտաճար,
 արգյոր ո՞վ ե պայքար մղում
 զարկվում նրան շարունակ...

Սոչի—1920 թ.

Մ Ա Յ Ր

Ինչքա՞ն ողբան ու լան
 տխուր, անլուր մըմուռ...

Մայրական սիրտը ճվեցին անգին
 հիշատակները գոհված զավակին,—
 ու հանդարտորեն, կաթիլ առ կաթիլ
 մարած աչքերեն մոր վշտատեսիլ
 արցունքներ ելին վոր գլորվեցին,
 խաժած շուրթերը լուռ հեկեկացին...
 ան, վորդեկորույս դուք թշվառ մայրեր
 ձեր արցունքները հոգուս մեջն են դեռ...

Սոչի—1921 թ.

Դու հեռու	Չգիտես
իմ հոգու	թե ինչպես
վշտերից,	կրժքիս տակ
կյանքի լուռ	ինչպես վառ
ու մոմուռ	ու անմար
ցավերից	մի կրակ
ապրում ես	քո սիրն ե
քեզ ու քեզ	վոր կերգե
անտրտում,	թրթռում
միշտ հպարտ	ու անհույս,
ու անգարդ	վշտահույզ
թափառում:	հեկեկում...

Սոչի—1922 թ.

* * *

Անշեջ սեր—
 փարոս մշտավառ
 սիրող սրտերի—
 ինձ ծանոթ չեյիր,
 բայց ահա արդեն,
 արդեն կրծում ես
 սիրտս սիրավառ...

Սոչի—1919 թ.

Լ Գ Վ Ա Մ

Այս մռայլ կյանքի տաղաուկ օրերում
 սարերի վրա ժուռ գալու կերթամ,
 ամայությունն ե իշխում իմ հոգում
 ալի մռայլ վիհը լեցնելու կերթամ...

Սոչի—1919 թ.

ԸՆԴ. ԲԱՅԹՈՒՆՈՒՆ

Անանց գիշերների սարսափի միջից
դեպի վերելք եյին քայլում նրանք,
դեպի բուրբուռների արշալույսը...
Գործելու ծարավով վառված,
մի անորինակ ույժով դեպի պայքար եյին ձգտում:
Դանգերի տակ ծրագրների մի ուղիյան կար,
վոր կարմիր արշալույսի յերկունքի ժամին ծնեցին
ու անվկանդ կրծքերի տակ,
ժայթքելու պատրաստ հրաբուխի հուզումը...

Յե՛վ անա նրանց արթնացնող հոգիների զայրույթը
հին աշխարհի թույնոտ հեգնանքներից
ու անգթութիւններից վերափոր
բռնկվեց ուժգին.—
Որերի զարշանքից շուրճած ուղեղների մեջ
ինչպես անգթութեան մխրճված մի սեպ—հնչվեց.—
«Ինչո՞ւ...»
մի՞թե քմահաճույքների մեջ գալարվող կյանքն է վոր կա,
մի՞թե անցնող աշխարհի գոհների արյունը
դեռ էի լվացել կյանքի կեղտը:
Մի՞թե դեռ յիստ էր պայթեց փոթորիկների փոթորիկը
դաժանորեն
ու իր շանթային սլաքները չը վիժեց թշնամու գլխին...

Ու նրանց ըմբոստի շրթունքներից կայծկտող հարցին,
վոր սավառնում է արիաքար մահամերձ հենի վրա—
պատասխան կա՛.—
Մենգորեն սողացող մենշեփիզմն է
այլախոսակ միտումների քմահաճույքներով ձգված,
արնաքամ պրոլետարիատի դահիճների հետ միասին
ճիվաղային հոգիների թոյնը հորդում՝ դեպի նրանք,
վորպեսզի լույսի ու վերջալույսի պայքարի ժամին
գիշերների խավարի մեջ շանթորեն կայծկտող մի լույս
իրենց հաղթանակի զրգվանքը բրբջալու համար—
անգթորեն հանգցնեն...

Ու մերժված ու հալածված ըմբոստները,
վոռնացող վոհմակների կրճառի տակ գլխիկոր,
քայց անընկճելի, յերկաթե վճիռների ապավինած,
կարմիր հերոսների կարմիր քայլելի հետքերով,
պողպատներից կերտված մի գաղափարի հակած—
մի վե՛հ գաղափարի,
վոր պրոլետար սրտերի մեջ սերունդից սերունդ,
ինչպես արեւի բոցը անշեջորե՛ն պիտի վառվի,—
դավաճանների աչքերին զրգվանքով թքելուց հետո
կեանքի մռայլ ուղիների փոշիների միջով
գնացին անապատների մեջ ոսպաններ շինելու,
վորպեսզի տոչորվող սրտերի ծարավը հագեցնելու համար
նրանց չորացած թիկերումնոր կյանքի աղբյուրը փորեն...
Սուչի—1922 թ.

ՓՈԹՈՐԿՈՏ ԳԻՋԵՐ

Ա. Ախոյանին

Թաց ու մթնած գիշեր է
մռայլ ու դաժան,
մերկ անտառը անբուն է
ծառերով հողմահան:
Բուր-բորան է կատաղի
դժոխքի նման
գետն է հորդում ամեհի
գահավիժորեն,
Խավար գիշեր է անանց,
յեթերում շփոթ
խառնված իրար դուման,
կայծակ ու վորոտ:

Սուչի—1921 թ.

*
**

Յերեկոն անցավ յերազի նման
գիշերն է գալիս անհայտ ուղիով,
հանգան լույս որվա շողերն աննման
աշխարհն է պատում մթնության բոգով:

Սուչի—1919 թ

ԱՇՈՒՂԻ ԵՐԳԸ

Թախծոտ աշնան թաց որերից
նա յերգեց իր մեղեդին,
յերգեց հոգու մութ ցավերից
ու հառաչեց լալագին՝—

«Հոգիս յերգել կուզե նորեն
սակայն հուլյներ ել չկան
սե, անգյուման այն որմանեն
սիրտս լռեց հավիտյան...

Իարդոտ սիրտս կուլա անհույս
անխ, ցավակցող մ'ալ չրկա
մարեց կայծը հոգուս, մարմնույս
անխ, ափսոսող մ'ալ չրկա:

Տառապանքի այս դժոգքում
թառամում ենք ու մաշվում
կյանքը մի բեռ, բաղդը դաժան
բաշում ենք մինչ գերեզման!..»

Սոչի—1919 թ.

Յ Ե Ր Ե Կ Ո

Յերեկոյան յերերացող շողերով
կարմրել են շեկ ծալքերը ամպերի
ու փայլում են մի ձյունափալ ծփանքով
կատարները միշտ ծերունի սարերի:

Հայնատարած ծովը շիկնած կը նիհրե
արեգակի վերջին, բոսոր ցոլրերով
և ձորի մեջ այնտեղ գետը կաղմկե
կարծես նրան գնաս բարով կանչելով:

Ու պատում ե կապույտ մեզը սարերին,
բողարկվում ե արգեն դեմքն ալ արեւի
և գալիս ե կարծես վոգին մթնվոյան
բնութ լուսնը յենթարկելու խոր բնի...

Սոչի—1919 թ.

Կ Ո Ձ

Քարունն ե յիկել
չարատանջ կյանքի
հեյ ճնշված ազգեր
ու ժողովուրդներ
մեծ արեւելքի
ու արեւմուտքի,
դուք վոր տնրում եք
դե կապիտալի
խեղդող լծի տակ,
վոր ինչպես պրես
ճնշում ե, քամում
հյուսթը ձեր կյանքի—
արթնացեք հիմի:

Դուք ել վեր կացեք
ատված, անարգված
սեվամորթ ճորտեր
«կիրթ» յերկրների
ու զաղութների.
յեկեք խավարից

ուղին պալքարի
ու հաղթանակի:

Տեսնում եք ինչպես
ամեն ծայրերից
մութ անկյուններից
զարթնող աշխարհի
ձեռք-ձեռքի տված
կռիվ են մղում
բաղցած ու տանջված
պրոլետարներ
կապիտալի դեմ:

Տեսնո՞ւմ եք ինչպես
այդ մեծ պայքարից
հաղթական ծնվեց
ինտերնացյունալ.—
այդ, ձեր պաշտպանին
գնացեք ձայն տալ!...

Սոչի—1920 թ.

Ս Ի Ր Ա Հ Ա Ր

Այ անգին, տենչագին իմ հոգին
հուզեցիր, վառեցիր, գերեցիր,
ու կրկին իմ սրտին խնդագին
դու արիր վշտակիր ու թողիր:
Չկա մին, մի կարգին թանկագին
սերտ ընկեր վոր տաներ դեպի վեր
հուլսերին, հուլյներին իմ անգին,
վոր տեսներ, կենսավեր իմ ցավեր:
Միթե անխ, այսպես վաղ ու խաղաղ
պիտ հանգչի ու կորչի անտեղի
դեռ մատաղ լուսաշաղ, հուսաշաղ
իմ վոգին լեռանդի, հուլյների...

Սոչի—1922 թ.

դերաս. Հ. Բաղդասարյանին

Վրսկե արեւի տաք համբույրներում թռչնի պես անդարդ,
յերգում եր մեկը կանանչ պարտեզում գեղեցիկ մի որ
գարունն եր իշխում հոգում եվ շուրջը կանաչ, ծաղկազարդ
ու թռչունները ձայնակցում ելին յերգին մեղմ որոր:

Մյուսը դուռում անդարման ընկած ցանկապատի տակ
խուլ հեծկտում եր արցունքն աչքերին անհույս յեվ
հոգնած.—

ո, նա թաղել եր դեռ մի քիչ առաջ հույսերը խորտակ
յեվ այժմ անկուր ողբում դառնորեն շիրիմը նրա՛յ ց...

Ս ոչի — 1921 թ.

*
* *

Կյանքի վորջում
մռալ, անհամբոյր
կարիքն ե հեզնում
մարդուն խելակույր:—
Ու ծիծաղում ե,
անհնգ բրբջում,
խաղացնում նրան...

Ս ոչի — 1919 թ.

*
* *

Ո, յեռ սիրում եմ պաղ զովությունը յերեկոների,
վերջին շողերի ալ կարմիր գույնը հանգչող սրեփի
լուռ մթնաշաղը, անկարգ համերգը ճոճաւկների
և լուռթյունը,— ո՛հ, այդ ամենից սիրտս կը լցփի...

Ս ոչի — 1920 թ.

Դառն ե կյեանքը ներկա որերում,
մահից ել դառն, մահից ել տխուր,—
անհուն ցավերով աշխարհն ե հեծում,
անծայր կարիքն ե իշխում ամենուր...
Ս ոչի — 1921 թ.

Հ Ի Վ Ա Ն Դ Ը

Գեղեցիկ, կանանչ գարունը լեկավ
ժպտում ե աշխարհը ծաղկով զարդարված,
հոգուս գարունը, ա՛յ ինչո՛ւ հեկավ,
ինչո՛ւ սիրտս լուռ կրծքումս ե փակված:

Թռչուններն ազատ լերգ են սրմնջում
կանաչ, ծաղկազարդ ծառ ու թփերից,
արգիեռք իմ սիրտը ինչո՛ւ ե թախծում,
ինչո՛ւ չի յերգում գարնան յերգերից...

Ս ոչի — 1920 թ.

Մ Ե Ն Շ Ե Վ Ի Կ Ն Ե Ր Ի Ն Հ Ե Տ Ե Վ Ո Ղ Ն Ե Ր Ի Ն

Անթիվ խենթերի մոլորված շարքեր
գնում են շարված ինչպես վոչխարներ,
իրենց առաջնորդ այծերին հլու
գնում են մահվան ժայռից թափվելու:

Ս ոչի — 1919 թ.

Հ Ա Վ Ա Տ

Գանցնի գիշերը արհավիրքների և չարիքների,
կը կորչի յեսը և զարշությունը այս դառն որերի,
կը մեռնի ոգին ընդմիշտ փոխերիմ դառաւարգների,
յերբ մուրճը հաղթե ու կեղեքվածներ այլեւ չեն
լինի...

Ս ոչի — 1991 թ.



Այ աղջիկ	ինչպես շող
գեղեցիկ,	ջերմացնող:
այ ծաղիկ	Մենակ ես
քնքուշիկ:	կը տխրես,
Հուսնո պես	արի դես
լուսերես,	փարեմ քեզ:
վարդի պես	Ու գրկեմ
ժպտերես—	համբուրեմ
ինչպես ցող	որորեմ
փայլիլոդ,	սփռվեմ...

Սոչի—1922 թ.

ՓԵՏՐՎԱՐ 1917 թ.

Սեվ համբերության բաժակը լցվեց
վերջնական թափով բանվորը շարժվեց
ու գոռ յերգերով լերկաթե շարքեր
քայլեցին դեպի հարուստ պալատներ:
Խրոխտ լերգերը սաստկացան շուտով
ցայտեց վրեժը արդար ցասումով,
հեղաշրջումը շանթի պես պայթեց
ծերուկ ցարիզմին անդունդ շպրտեց...

Սոչի—1920 թ.

Մ.....ԻՆ

Ծաղիկ կիսաբաց
այդ խավարի մեջ
պիտի թառամես
փակված թռչնի պես,
պիտի թառամես
և իզուր մեռնես,—
ափսոս քեզ, ափսոս...

Սոչի—1919 թ.

Քեզ սիրեցի	անգու թ սերը
ու վառեցի	մեր սրտերը
իմ սիրելի,	խոցեց խորը:
ինձ սիրեցիր	Հսկր դու ինձ,
ու թողեցիր	հաշտվեց խորից
ու հեռացար.	պրծնեք վշտից.—
խոռվեցինք	թե չե վառա
բաժանվեցինք	կռակ դառա,
ու տուժեցինք.	մոխիր դառա...

Կրասնոդար—1922 թ.

Թ Ը Տ Ե Ր Ի Ն

Ծանր պայքարի յերկունքի միջից
ծագում են ահա որերը պայծառ,
հեյ, պատռեցեք քողն աչքերից—
ազատ, աներկմիտ հայեցեք առաջ:

Կարմիր որերի ճաճանչների մեջ
ծլում են ահա, ծլում են աճում
նորելուկ կլանքի բոսոր ու անշեջ
ծաղիկները վառ գիւ աղջամուղջուժ:

Յեվ ահա արդեն զգում եմ, զգում
վոր լավ որերը նայում են շեմքից
ո, սթափվեցեք, սթթե չեք տեսնում,—
դուր ել հարեցեք շինարար կյանքին!...

Կրասնոդար—1925 թ.

ԿՈՄՈՒՆԻՐԸ

Վոչ, յես վախ չունեմ այն սեղաններից
վոր սպասում են ինձ հեռուններից,
կերթամ համարձակ, և գուցե հանկարծ
ազատամարտում տեսնեք ինձ բնկած!...

Սոչի—1921 թ.

* * *

Յես միշտ ուրախ եմ յերբ աշխատում եմ քրտինքը ճակտիս,
մի գործի վրա անձնվիրությամբ ույծ—խելք թափելիս,
բայց յերբ պատահմամբ, կամ գիտակցաբար անգործ եմ
մնում
հոգւս անիմաստ յեմ անտանելի թախիծն ե պատում...

Սոչի—1920 թ.

Ա.....-ԻՆ

Ո, հուսանք յիղբայր,	կը հաղթե հինը
հուսանք և գործենք—	ու մութը անգութ:
գիշերը կանցնի	Լքվե՛լ հուսաթափ,—
ու արշալույսին	վո՛չ, այս պայքարում
կը ծագի արփին:	դասակարգին
Մութը ճեղքելով	անհաշտ ույծերի,
կարմիր սլաքներ	մենք պիտի հաղթենք
կը թռչեն հեռուն	հուր—հզոր կամրով
մի ակնթարթում	ու կառուցանենք
ու նորը հզոր	անաչար կոմունիզմ...

Սոչի -- 1922 թ.

Ա.....-ԻՆ

Դու, թշվառական
խոսքդ կարճ կապիր,—
անմտի նման
մի շատախոսիր...

Սոչի—1921 թ.

* * *

Լայնանիստ ծովի անհուն հորերից դժոխքի նման
փչում ե քամին դառնաշունչ և ցուրտ մահվան պես
անկյանը
և ծաղիկները դեռ նոր կոկոնած սիրուն, անմահ
գարնան սկզբին մեռնում են հանկարծ վորպես մի
տրփանք...

Սոչի—1921 թ.

* * *

Այսոր մեծ տոն ե, խնդում են սրտեր
մախն ե ժպտում ամեն ինչի մեջ,
ինչքան դրոշներ պարզված դեպի վեր
համբույր են տալիս արեվին անշեջ:

Այսոր քաղաքներ կարմիր են հագել,
այսոր յեմ գյուղը դրոշ ե պալգուս—
Մախի մեկն ե գարնան հետ յեկել,
ամեն, ամեն տեղ յերգեր են հնչում:—

Երգեր են հնչում, պայքարի՛ յերգեր
յեմ ազատության մեծ հաղթանակի.
դեռ արյունահոս ու թաց են վերքեր
բայց խնդրությունն ե ցայտո մ՝ կրճերից:

Եվ յեվրոպական հոծ պալատներում
հիվանդ են վախից շատ հաստափորներ,—
այսոր թնդում են հրապարակներ
յեմ աղ թնդոցը—նրանց մահաբեր!...

Կրասնոդար—1926 թ.

Ա Ն Հ Ո Գ

Ո, յես սիրում եմ լուսնյակ գիշերին
բնության գրկում մեն մենակ նստել,
նայել անդադար լուսնի շողերին
և խորհել անվերջ, տենչալ, յերազել...
Սոչի—1920 թ.

ՓԹԹՈՐԿԻՑ ՅԵՏՈ

Հանգիստ ե ծովը, խաղաղ ու անդորր,
բնած են ջրի օլիքները գոռ.
անվերջ պայքարից կարծես վատտակած
ննջում են նրանք անգոր և հոգնած...

Սոչի—1921 թ.

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ (С Т И Х И)

Ա. ԱՒՈՅԱՆԻ

А. АХОЯНА

ՀԱՅՅՈՒՆ ԶԱՆԳՆԵՄ

Յես կուզեմ երգս երկարե
ընթերցող, քո սիրտը մեղմե,
քե քնած ես—զարթեցնե
նոր կյանք քո մեջ կերտե...

Հնչյուն
զանգն եմ
նոր որերի,
սիրտս վառված
քորք արեվի,
կարմիր հրովն հոկտեմբերի:
Յես
յերգիչն եմ
զալիք կյանքի,
հաղթանակի—

վառ,
ու պայծառ,
սոցալիզմի,
համայն կյանքի:

Իմ երգերում,
շանթող հրում.
չկա սուգ, լաց—
հաղթ
մուրճերի
հուր զարկերից
նրանք ճուլված,

յերկաթակուռ
քաղսկներով
կուված—կուփված,
միլոներին,
միլոներին
դեռ կտան կայծ...

Հյ,
դեռ
ինչե՛ր,
ինչե՛ր
պիտի յերգեմ—
վառ զալիքին
բոսոր կյանքին:

նոր-նոր յերգեր,
միշտ մարտնչող,
հուր ներշնչող,
լուսավառող,
ու շատաչող—
կարմիր
սերնդին—
վոր
զարթնեն
պրոլետարներն
անհամար,
միանա
ու
խնդա
վողջ աշխարհ
միլոն դար...

Կրասնոդար—1924 թ.

Մ Ե Ն Ք

Մենք
վոր յեկել ենք
դարերից,
հրից,
ու մրից,

աշխարհիս
բոլոր կողմերից.—
ու
տեսել ենք

և լսել ենք
 զրկանք
 անարգանք—
 Մենք—
 մեկ չենք,
 հազար չենք,
 միլիոն չենք—
 միլիարդ ենք:—
 Վոր,
 բերել ենք
 մուրճը մեծ—
 հուժկու
 հարվածը վոր տվեց
 պատնեշներին,
 պալատներին,
 բանտերին
 ու բանդեց,
 փշրտեց
 մեծ հոկտեմբերում,—
 արքային գահից
 շարտեց,
 պրոլետարներին
 դառը կյանքից
 ազատագրեց:
 Հէյ, գիտե՞ք
 մենք ի՞նչ ենք—
 յեկերտրատոր,
 շոգեկառք
 շոգենավ,
 ողանավ...
 Յեթե ուզենք
 յերկինք կը թռչենք,
 արեւին,

աստղերին,
 կը գրկենք:
 Որերը,
 տարիները
 կը փոխենք,
 յերկիրը իր տեղից
 կը շարժենք,
 մի նոր
 Ամերիկա կատեղծենք!...

Մեր դեմը
 յեշտողին
 կը գգենք,
 բզկտենք
 դեն գցենք...

Մենք, այսօր,
 վաղը, միյուս օր—
 պիտ կռենք
 ու կոփենք
 կամք հզոր
 ու բոսոր—
 բոլորին,
 ВСЕМ
 à tous!...

Ո՛վ լինեն,
 ուր լինեն
 վոր կան—
 նաիրից,
 նյու-յորկից,
 Լոնդոնից
 պիտի գան
 ձեռքերը տան
 միասան...
 Մովորոսիսկ—1926 թ.

ՀՈԿՏԵՄԲԵՐՆ ԵՄ

20Ն ՄԻԿՈՑԱՆԻՆ

Հոկտեմբերն եմ, հրով լցված ե հոգիս,
 ազատվել եմ բյուր դարերի կապանքից,
 փորփրելով վողջ աշխարհը եր հիմքից՝
 յես հարթել եմ մի վեհ ուղի նոր կյանքի:

Յես ծնվել եմ դաժանագին խավարում,
 են անցյալի գազիր ու նեղ որերում...—
 Ուր քուլնգներ ընդմիշտ շաչում, շառաչում,—
 և ամբոխը ցավոտ սրտից հառաչում:

Յես ճեղքեցի սիրտը բոսոր արեւի
 ու պարզեցի վեհ դրոշը պայքարի,
 վոր շատերին գեպի արեւ պիտ տանի,
 դեպ սոցյալիզմ, դեպ կոմունիզմ խնդալի!...

Ն Ր Ա Ն Յ

ՄԻՍՍՈՒԼԵՑԱՆԻ
 ԱՆՄԱՀ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Նրանց, վորոնք հուր վառեցին
 գազիր որերում,
 պայքարեցին ու մահ գրկեցին,
 մեծ հոկտեմբերին,
 խնդավառ վողջույն

Նրանց, վորոնք տանջվում են
 մութ ուղիներում—
 վաղ կը հրդեհեն, մեծ հոկտեմբերը
 համայն աշխարհում—
 բյուրավոր վողջույն:

Նրանց, վորոնք գալիքին կը գան
 ու կը տեսնեն
 նոր—լույս ապագան—
 վողջակեղ
 վողջույն...

Դեպի բեզ,
 դեպի բեզ ենք գալիս
 հեյ արեւի հուրերես, —
 մենք քոնն ենք, թե կուգես
 քո թեժ հրով այրիր մեզ...
 Մինք բյուր, միլիոն կոմսոմոլ,
 մեր սրտերը բոսոր ե աչտոր,
 մեր կամքը բոլորից հզոր...
 Այն չուներ, վախ չունենք վոչփոքից,
 ազատ ենք, հարազատ նոր կյանքին...
 Հուր զարկեր, բյուր զարկեր, զարկելով
 փշրեցինք շղթաներ դարեւոր,
 վառեցինք անշեջ ջահն աշխարհին,
 հարթեցինք նոր կյանքի վեհ ուղին...
 Գալիս ենք անվեհեր տիտաններ
 փռելու աշխարհում մեր թեվեր,
 Հուրհրան ուղիով միշտ անծայր
 շահում են, հնչում են մեր լերգեր—
 վորպես թեժ, հրածին վառ շանթեր:
 Գահ՝չում ենք. «վերջն ե ձեր դահիճներ,
 ԳԱԼԻՔԸ, ԱՊԱԳԱՆ ՄԵՐՆ Ե ՄԵՐԸ»!...

Կրասնոդար—1925 թ.

* * *

Յես հիմա թուշուն եմ թեթեւ
 հուրհրան որերում ծնված
 իմ ուղին կարմիր ե, անծայր,
 լուսաավառ ժապավեն փռած:

Յես հիմա կոմսոմոլ տղա
 պայքարի հրով արբած,
 վառվողն գալիքի համար
 յես շանթող պոետ դառած

Մոսկովսկի—1926 թ.

Չարենց, նորածին յերգիչ,
 միլիոն մասսաի սրտի ճիչ,
 Չարենց, քո յերգերը հրկեզ
 հնչում են աշխարհում կրկես:

Չարենց, քո սրտում դեռ կան
 հազար ու մի յելք հաղթական—
 վողջ աշխարհի միացմանը
 նրանք ասպարեզ պիտ գան...

Կրասնոդար—1924 թ.

ԻՄ ՔԵՆԱՐ

Առանց բեզի, կյանք չունեմ
 յես քնար,
 կարմիր յերես, այս աշխարհում
 իղձավառ,
 յերագներս, մուրագներս, ախ կը մեռնեն
 անկատար...
 Ո՛վ կը բուժե խոր վերքերս
 ցավազար,
 թե չը լինես իմ պայքարի
 դու քնար:

Դու ես միակ վշտի լացի
 ժամերին
 ցավս լացող, մխիթարող
 իմ հոգին,
 դու ես միակ ժպիտ տվող
 իմ դեմքին
 ինչպես արեւ վառ—ծաղկաբույր
 զարունքին...

Կրասնոդար—1923 թ.

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐԻՆ

Յեւ ձեզ սիրել եմ դեռ մանկությունից,
միջոց պատգամել եմ բռնամուր բույնից,
վոսկի մազուցներ, բնկերներ իմ սեզ
ձեր կոշտ ձեռքերին ու դառն քրտնաբեր
սվել եմ իմ երգը—լսե՛ք հեյ, լսե՛ք...

Ձերն ե ապագան անգին ընկերներ,
Խղճուկ ու թշվառ, քայց ժիր քանվորներ
վոր հին որերում դուք անարգվեցիք
յեվ լույս աշխարհից հավետ գրկվեցիք:

Ո՞վ եր ձեզ նման մոռալ հանքերում
դաժան քանտերում, խավար այրերում
մանուկ որերից հալվում ու մաշվում—
անվողոր կյանքի մեծ բեռը քաշում...

Ջազիր ու կեղտոտ խոնավ հուղերում
ապրել եք յերկար որեր, տարիներ,
այն դառն վիճակում լաց ու կոծի տեղ
ուրախացել եք, ժպտել, ծիծաղել:

Յեվ գիշեր-ցերեկ դուք միշտ անդադար
զարկում եյիք հուժկու քլունգը հողին,
արյուն ու քրտինք ընդմիշտ թափելով,
գանձ եյիք դիզում անկուշտ փորերին:

Ո՞վ որքան ձեզ պես այն դառն վիճակում,
մոռալ հանքերում, խոնավ քանտերում
հալվեցին մաշվան անթիվ ընկերներ,
կամ մահ գրկեցին կոպում անվեհեր:

Նորեկ աշխարհի պայծառ որերում
թող խնդավառվի ձեր տանջված հոգին—
վարդաշունչ սիրո կարմիր գալիքին,
խոչնդոտ չկա՛ ձեր վեհ թոփառին:

Ձերն ե ապագան—գործեցե՛ք ազատ
կարմիր որերի վորդիք հարազատ,
ձեզնով պիտ կանգնի Կոմունա աշխարհ
վառ սոցիալիզմի ալ դրոշի տակ...

Արմավիր—Կրասնոդար 1923 թ.

ՓՈԼՈՅԱՆՆԵՐԻՆ

ՀԱՏՎԱԾ ՊՈԵՄԻՑ

Բավ ե զուգվեք, զարդարվեք,
մեր սրտերը լիզել դուք ուզեք
արդյոք հիմա չը գիտե՞ք
վոր մեր հոգում տեղ չունեք:

Դուք վոր կա՛ք, կեղծիք եք միայն,
սովոր եք, սիրել, անարգել,
մեկին, ամենքին խաբել,
վերջին կոպեկը լափել:
Ո՞ճեղեն մարմնով փարե՞լ եք ուզում
նորից մեր հոգուն,
թույնոտ խոսքերով դյուլթել եք ուզում
յեվ մե՞ր որերում:—
Դուք ե, գուր ե,—
անցած որերը չկան,
անցած որերը չեն գա—
անդարձ մեռան, կորան...
Ի՛նչ, դարձյա՞լ յերգել «սեր»,
վոր նորի՞ց պղտորվեն մեր սրտերը,—
հոկտեմբերը կտրեց «սիրո» թելը,
վոր զովում եր պրոֆիլը ձեր...

Հիմա ումք ե
յերգը մեր,
վոր թնդա—
կը ճեղքի կուրծքը ձեր
ու կը ցնդի «սերը» ձեր
դեպի վեր:
Յեթե ուզում եք «որիորդներ»
չը լսել նորից վատ խոսքեր:—
Դե՛ լսեք,
իմացեք,
հասկացեք:—

Բա՛վ ե՛, փողոցը թողեք,
յեռանդուն նոր կյանքին հարեք
ինչպես մենք, տեսնո՞ւմ եք..
Սովոր չե՞ք աշխատել, չարչարվել—
քրտինք, արյունով հաց հանել
վոր անում են այսոր միլիոներ—
կոմսոմոլկա իմ անգին ընկերներ
սովոր չե՞ք,—վոչի՛նչ կը սովորեք,
կարմիր թաշկինակ կը կապեք
մուրճ ու մանգաղ ձեռքերդ կառնեք,
մեզ հետ միասին կաշխատեք.—
Կիմանաք—ինչ ե աշխատանքը,
քանվոր ու գուղացու կյանքը...
Կրասնոդար—1924 թ.

Հնի դուր, կուշտ փորեր,
Մանուկ ու ծերեր.—
տեսել եք արդյոք,
կայարաններում
մեծ քաղաքների,
խուլ անկյուններում
մանուկներ անթիվ
անհեր ու անմեր
ցնցոտիներում—
վորոնց սրտերում
այս վառ որբերում

վերբեր են տիրում:
Տվիլ եք նրանց
դուր կտորմ հաց,
վոր չը մեռնեն
թշվառներ քաղցած...
տեսել եք ինչպես
ձմեռվա բուրին,
սառնամանիքին
մինչև լուսծեղին
պատերի տակին
տալիս են հոգին...
Տունելի — 1926 թ.

ԿՈՄԱՆԶԻԿ

Այ, նուշիկ
սնուշիկ,
կոմսոմոլկա
դու աղջիկ—
դու թեցիր,
վառեցիր
իմ հոգում
սիրո ջահ
խնդագին
նվ անգին:
Յես վորդի
բանվորի,
դու աղջիկ
գեղջուկի—
ուղեկից
նոր կյանքի
կը բալենք

ձեռք-ձեռքի:
վառ սերըդ
միշտ յերգած,
КИМ դրոշ
յես գրկած,
վեհաշունչ,
անտրտունջ,
ուղիով
նորածին,
դեպ արեվ
հրածին,
բայում եմ
միշտ առաջ—
իմ սրտում
միլիոն կանչ,
դեպ—
հառաջ...

Մի անհուն կարոս
իմ սիրտի և սանձում
այս աղջամղում...

Նորից դու ես,
լուսերես:
Ու հեզանազ
աստղի պես:
Բուք գիշերին
դու կրկին
մ որմոքում ես
վշտագին:
Ինչ ես աշուպես
վշտագին,
ի՞նչ ես փնտրում
լալագին...
Ի՞նձ ես կանչում
դու կրկին
յես ել այն չեմ
ո՞վ, անգին:
Լույս ե վառվել
իմ ճամբին—
մոռացել եմ
ցնորքը հին:

Յես սիրում եմ
ուրիշին
վոր, քրտինքն ե
յերեսին:
Յեթե կուգես
սիրեմ քեզ
թեժ արեվի
շողքի պես,
մ ութ խավարում
չը տխրես—
թե չես խեղճ ես,
կը մեռնես...
Ձեռքդ տուր ինձ
դու այսօր
սիրենք պայքար
քոսոր...
Աշխատանքին
խնդագին
տանք մեր
կյանքն ու հոգին...
Գարյաշի-Կլյուչ—1925 թ.

*
* *


Հիշում եմ, հիշում, տանսեռ թվին
հեղափոխության բոցի ժամ երին
նոր եր լրացել իմ ութը տարին
յես ցրիչ եյի նորեկ թերթերին:
Հիշում եմ, հիշում յես չեմ մոռացել
յեռուն մանկության աշխատանքն ու սեր
յեվ այն ամենը նոր հուր են վառել,
սրտումս կապրեն հավիտյան անմեռ:
Ո՞ր, կուգեմ կրկին սավառնել դեպ վեր,
թռչել ու շրջել Կարսում այն ավեր
ու նորից հիշել քոյոր այն որբեր
վոր ինձի տվին թռչելու թեվեր:

ՓԱՐԻԶՅԱՆ ԿՈՄՄՈՒՆԱՆ

(ՀԱՅՎԱԾ ՊՈՆԵՄԻՑ)

.... Յեւ վողդոցներում հսկա Փարիզի
 յեռուն ալյաց պես արծազանք առած
 հնչում ամենուր ծանր առածիզ,—
 յեւ ինչպես փարոս, ինչպես ուղցույց
 քաշում ամբոխին դեպի գործը մեծ,
 գործը վիթխարի...
 Յեւ որհասական զայրույթով լցված
 վերջին պայքարի
 փոթորիկն եր մեծ ծագումն առել
 դաժան որերից,
 մահու յեւ կենաց աշխարհն եր կոփվում —
 նոր աշխարհ հիմքից:
 Ո՛հ, դեպի պատնեշ,—վեր կաց ընչագուրկ
 դիմիր ամենի,
 դեպի ըարրիկադ դու՛ պրոլետար—
 որհասի ժամին,
 դեպի պատերազմ, վե՛ր, քաղաքացի—
 պայքարն ե կանչում:—
 Ի զե՛ն...
 Իզե՛ն սոցիալիստ, իզե՛ն կոմունար...!
 Ու անել, դառը տանջանքի բովից,
 լցված պայքարի տարափովն ահեղ,—
 ամեն անկյունից զալիս եյին նոքա,
 զալիս եյին կին, տղամարդ, ծերուկ,
 պատանի, աղջիկ ահել ու ջահել—
 բոլորը...—
 Անվողոք կյանքի զավակները քաջ,
 բոլորը նորի հիմնադիր մարդիկ,—
 ու գնում եյին վոգով անտրտունջ
 կարծես դեպ գիրկը յերջանկութ յեան...—
 Իսկ առաջներում պատնե՛շ, ըարրիկադ
 յեւ ամենուրեք պայքարը միակ:
 Ամեն տեղ դեմը՝ Վերսայլն եր կանգնած
 վրեժխնդրութ յան, արյունի ծարավ
 յեւ գոռ, ամենքին եր մահ սպանում

այն զազանացած զալիքեն լսիրշ:
 Ու զալիս եյին մի վերջին անգամ
 ծուլված կուռ կամքով,—թեկուզ յեւ անկազմ,
 արնով կնքելու, վերջնական ժամին
 նորին հիմք դնող—ճակատը գործի:
 Իսկ արհավիրքը զոհեր եր տանում
 ըարրիկադներից,
 տազնապը վիժված հրդեհ եր վառել
 ամեն անկյունից
 յեւ մթնոլորդը լեցված եր վերջին,
 մահվան ծիչերով,
 յեւ վորոտներից ամեն ինչ դառնում
 խարխուլ, փլատակ—
 իսկ զնդակների տարափից ընկնում
 միլիոն նահատակ:
 Սեւ դիակների կույտեր են դիզված
 արնաթաց գետին,
 վոմանք դեռ վերքը պինդ սեղմած կրծքին
 սողո՛ւմ են առաջ,
 սիրելիներից ու ծնողներից
 զոհված, արնաքամ
 սպասում իրենց մահացող կյանքի
 վերջին ըուպեյին:
 Մահվան սարսափը մեռել եր արդեն
 հոգիների մեջ,—
 «Կեցցե՛ կոմունան» կանչում եյին մի,
 մի վերջին անգամ
 ու մահը գրկած ընկնում խորտակված
 ըարրիկադներում...
 Կրասնոդար—1926 թ,



Վ Ր Ի Պ Ա Կ Ն Ե Ր

երես	տող	տպված է	պիտի լինի
5	14	տնքում	տքնում
5	19	ինչքան	ինչքան
8	24	հոն,	հոն
12	12	արթնացող	արթնացող
15	3	կյանքի	կյանքի,—
15	12	ճշում է	ճգմում է
16	1	Կոնտաստ	Կոնտրաստ
16	2	Բաղդասարյնին	Բաղդասարյանին
27	7	յելք	յերգեր
31	3	լուսերես:	լուսերես
31	16	պայքար	պայքարը
31	27	հեռուն	հեռու

<< Ազգային գրադարան



NL0331616

30691

ԳԻՆՆ Ե 25 ԿՈՊԵԿ

Վաճառվում է Գրասնողարի պրոլետ-
գրողների հավակալան սեկցիայում
(в клубе „Нацмен“) և Դոնսկային Կով-
կասի կենտրոնական քաղաքներում: